Ոչ մէկ արտասուք յաղուրդ պիտի տար,
Ոչ մէկ արեղակ ճաճանչ աչքերուս.
Ինչպէս թըզենին զոր չորցուց Յիսուս,
Պիտ՝անցնէր քովէս այրած ճանապարհ։

Պիտի խնդրէին միրգ ու մեղր եւ կաթ,
Ամլացած ծառէն, սայրասուր փուչէն.
Բայց կողիս անէծքն ու մեղքն անօրէն,
Սէրերըս տարին, թողին անապատ։

Կարօտ եմ ես Տէր, մատներուդ աղուոր,
Ջնջելու անյոյս ամպեր մըթութեան.
Յողբդ օրհնաբեր եւ չունչըդ դարնան,
Թող ըլլան ինձ կեանք, արշալոյս բոսոր։

ՈՂԲ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Երթալ կ՝ուզեմ անձուկ ճամբան սրբութեան,
Թող զիս խոցէ թշնամին.
Թող սուր փուչեր իմ արիւնէս յաղենան,
Զեմ խոնարհիր ես հողին։

Զեռքն Աստուծոյ ինձ անաղմուկ կ՝երկարի,
Կեանքն արշալոյս կը փոխուի.
Կը վերանամ անմահութեան իրրեւ խունկ,
Իրրեւ հաւատք անյեղլի։

Սրտիս մէջ ողբ, սրտիս մէջ յոյս ցանեցէք,
Որ մօտն ըլլամ Աստուծոյ.
Մանանեխի հատիկ մ՝ափիս մէջ դըրէք
Փոխելու յոյսը սիրոյ։

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ՀԱՅՈՑ ՈԳԻՆ

(ՄԱԿՆԻՍ ԱՐՔԱՆ)

Այսպէս խօսեց իմ երդը նոր,
Իմ հին երգի խորհուրդը խոր։

— Ո՞վ է ասում թէ էլ չկայ
Հայոց երկրում ոչ մի արքայ,
Այն էլ՝ անթագ եւ անմարմին,
Նման անտես ոգեզարմին։
Հապա այսօր
Այն ո՞վ է, որ
Գահընկեցուած Մասիսն յիշում՝
Ցրուած ազգին տուն է քաշում,
Որ տուն բերէ
Սարերն էլ վեհ՝
Մասիսն էլի թագադրէ...
Ինչ էլ ասէք՝ ես եմ հայկեան
Ազգն հաւաքող Մակնիս արքան։
Արքան՝ թէկուզ մի որբ ազգի,
Այն էլ դարում այս մոլեգնած,
Երբ կայծակով բիւրոց բազկի
Արքաներն էն գահընկեցուած։
Ինձ չեն կարող գահընկեցել
Թէկուզ դարում այս օձենի,
Ինձ Աստուած է արքայ օծել,
Օդից էլ սուրբ՝ անխոցելի։
Ամէն հայի սրտում էլ հեղ
Անգահընկեց արքան եմ ես.
Թէկուզ այժմ առանց գահի,
Անգայիսոն, անթագուհի,

© National Library of Armenia

Առանց հարճի,
Առանց մահճի,
Առանց դահճի, առանց նըման,
Առանց դահլիճ, անհըրաման,
Առանց պալատ, առանց բերդի,
Առանց վահան, առանց վերտի,
Առանց զօրքի, անզօրապետ,
Առանց զէնքի, անասողապէտ,
Անարքունիք,
Առանց կընիք,
Առանց մական, առանց մըկունդ,
Միակ արքան՝ անզօրագունդ,
Առանց վըրան, առանց դաշտի,
Առանց դէթ մի թինավաշտի,
Առանց թըրի,
Առանց սըրի,
Առանց դաշոյն,
Նոյնիսկ անչուն,
Բայց արքան եմ, մէջ էլ վայոց
Քանզի ողին եմ ողջ Հայոց:
Ազգաողին, ողէարքան,
Ես՝ ինքնածին բնազդն հայկեան,
Խելքից էլ խոր՝ բնազդը խօլ՝
Բընազդը խօլ՝ խելքից էլ խոր,
Բընազդը բիրա, բընազդը նուրբ,
Միակ հայ խելքն ամենասուրբ,
Որ ինքն իրեն կը խոխոխի՝
Բայց իր ազգը նա չի փոխի,
Ինչպէս դու չես փոխի յաւէտ
Քո հայ ազգին՝
Քո մայր ոսկին
Օտար անթիւ արծաթի հետ:

2.

Այսպէս խօսեց խորհրդաւոր,
Ողին մեր մեծ՝ իմ երգը նոր,
Հայոց միակ արքան դառած,
Աչքը դէպի Մասիս յառած,

Խելքից էլ նուրբ
Բընազդը սուրբ,
Դեռ էն գլխից մինչեւ այսօր
Միակ արքան ամէնազօր,
Առանց աղեղ, առանց նետի,
Առանց ահեղ թնդանօթի,
Առանց թմբուկ, առանց թափօր,
Առանց շուքի, առանց շեփոր,
Օրէնքից վեր, առանց վեհի,
Բայց արքան եմ այն ամենի,
Որ դահ ունի՝ աշխարհով մէկ
Ցրուած Հայոց սրտում էլ հէգ:
Եօթանասուն եօթը երկրում
Ցրուած Հայոց
Արքան եմ բոց,
Թէկուզ իրաւ առանց ամրոց:
Այս դարում էլ մահակնճիռ՝
Ես կամ՝ թէկուզ առանց հրթիռ:
Մէկ՝ սրգաւոր,
Մէկ՝ թագաւոր՝
Անչափումբ, անծիրանի,
Բայց արքան եմ Հայաստանի, –
Իմ տէրութիւնն աշխարհով մէկ
Եղեռնացիր ազգն է իմ հէք,
Ում դրդում եմ ամէն վայրկեան...
Ես ամենայն Հայոց արքան:
Սուրբ կարօտով Արարատի՝
Զարթնեցնողն Հայոց դատի...
Իմ հրամանն արքայական՝
Հայ մընալն է յաւերժական
Ամէնօրեայ Աւարայրով:
Հայ մընալն է՝ ամէն վայրով, –
Վչտի մէջ էլ՝ մշտականգուն
Հայ մընալն է՝ Հայկի հանգոյն:
Հրովարտակն իմ դերագոյն՝
Ազգահաւաքն է հայութեան
Արարատիս շուրջն յաւիտեան,
Շուրջն իմ մարմին Արարատի
Աստ էլ՝ ընդդէմ ճերմակ ջարդի:

© National Library of Armenia

3.

Այդպէս խօսեց ոգին ազգի՝
Շարժողն Հայոց միտք ու բազկի,
Այս պատգամեց
Բընազդը մեծ,
Որ թէ մարմին ունի – ասեմ՝
Մեծ Մասիսն է երկնավըսեմ,
Հային միշտ հայ ու մարդ պահող՝
Ազգի օրհասն էլ կըռահող
Բընազդը վեհ,
Որ սաստում է՝
— Ազգ իմ, վազը ազգ չես մընայ՝
Թէ կէս դար էլ այսպէս դընայ,
Եօթանասուն եօթը երկրում
Հայոց ճերմակ ջարդն է բերկրում...
Ծանիր զքեզ՝ քեզ ճանաչիր,
Ցրուածութեամբ քեզ մի՛ խաչիր,
Շատ մի՛ ծովին դու մօտենայ՝
Գետը ծովին կուլ կը դնայ...
Տես՝ արծաթեւ ծովերու մէջ
Ոսկէ գետըդ կը կորչի, խեղճ, –
Բայց չես կորչի՝ թէ հաւաքուես
Թէ չուտ դաս տուն,
Թէ բըռունցքուես
Շուրջը քո հայը Արարատի,
Որ յաղթէ իրճն Հայոց դատի...

4.

Այսպէս պիտի ժայթքի յաւերժ
Հայոց ոգին օտարամերժ, –
Տիգրան մեծից էլ խօլական
Ազգն հաւաքող Մակնիս արքան,
Խօ Ազգը փնջող
Երգը մեր ճոխ
Հայկ դիւցազուն
Հայոց լեզուն՝

Միակ փրկիչն երկփեղկ ազգի,
Այն էլ դարում այս մոլեգնած,
Երբ կայծակով բիւրոց բազկի
Արքաներն են դահընկեցուած,
Ինձ չեն կարող դահընկեցնել
Այս դարում էլ հրթիռակոծ:
Ինձ Աստուած է արքայ օծել,
Որ ազգ պահեմ, ազգն իր Հայոց:
Ամէն դարըս աւարայրուի
Վանայ ծովն էլ այս կողմ բերեմ,
Ամէն անկեալ թագադրուի,
Մասիսն յաւերժ թագադրեմ:
Վերածնուեմ դէթ լճից-լիճ
Մեծ Հայաստանն իմ այն թովիչ,
Որ ազգ պահեմ, ընդդէմ վայոց,
Մասիսածին ազգն իմ Հայոց, –
Էլ չտեսնի ոչ մի վայրէջք
Ազգն իմ՝ յաւերժ մասիսամէջք.
. . . . . .
Հին Հայաստանն յաւերժ նորեմ՝
Ազգըս յաւերժ թագաւորեմ...
Ազգ իմ, որ միշտ
Ծաղկես անվիշտ,
Որ ծովից ծով յաւերժ երգես,
Աշխարհակալ Տիգրանիդ պէս:

ՅՈՎՀ. ՇԻՐԱԶ

© National Library of Armenia